ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՊԱՐԵՏԻՆ

24.03.2020 21:25

Պարետի 24.03.2020 թվականի № 14 որոշմամբ որոշ բացառություններով արգելվել է տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելը:

Բացառությունների մեջ չեն ներառվել փաստաբանական գործունեության և իրավաբանական ծառայությունների տեսակները (69.10.0): Բացառությունների մեջ ներառված չէ նաև Փաստաբանների պալատի, այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակի գործունեությունը:

Փաստաբանների պալատի նախագահը՝ դիմելով պարետին, մտահոգություն է հայտնել փաստաբանների և փաստաբանների պալատի գործունեությունը սահմանափակելու կապակցությամբ:

Մեջբերելով Սահմանադրության 64-րդ և 76-րդ հոդվածների դրույթները Փաստաբանների պալատը պարետի ուշադրությունն է հրավիրել այն հանգամանքին, որ՝

- անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը չի թույլատրվում սահմանափակել նույնիսկ արտակարգ դրության ժամանակ.

- փաստաբանի իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև իրավունքների սահմանափակումները կարող են սահմանվել միայն ՕՐԵՆՔՈՎ և ոչ թե կառավարության կամ պարետի որոշումներով:

Ակնհայտ է, որ նույնիսկ արտակարգ դրության օրերին անձինք կարիք են ունենալու իրավաբանական օգնություն ստանալու, քանի որ՝

- Հայաստանի Հանրապետությունում շարունակվելու են քրեական հետապնդման ենթարկվել քաղաքացիները, այդ թվում՝ կատարվելու են քննչական անհետաձգելի գործողություններ,

- ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների խախտումների հարցերով ընթանալու են անհետաձգելի դատավարություններ (օրինակ՝ մեղադրյալի կալանավորման հարցով դատական նիստ),

- հնարավոր են մարդկանց իրավունքների և ազատությունների խախտումներ (ապօրինի ազատությունից զրկում, ապօրինի տուգանքներ և այլն):

Փաստաբանների պալատի նախագահը խնդրել է վերացնել փաստաբանների և Փաստաբանների պալատի գործունեության նկատմամբ կիրառված սահմանափակումները:

Հ.Գ. Գրությունը որևէ կերպ չի արժեզրկում Փաստաբանների պալատի դիրքորոշումը և հավանությունը՝ Կառավարության՝ նոր կորոնավիրուսի դեմ պայքարի քաղաքականության իրականացման հարցում:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 24.03.2020թ. գրությունը

Առաջարկվող նորություններ

11.03.2020ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ՝ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

18.03.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՁԵՌՆԱՐԿԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ)

01.04.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՊԱՐԵՏԻՆ՝ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԱՐՑՈՎ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

06.10.2020ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })